*ՆԱԽԱԳԻԾ*
*(լրամշակված)*
*Պ-703-04.08.2020-ՖՎ-011/0*

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ~~ՆԵՐ~~ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

~~***Հոդված 1.***«Հաշվեքննիչ պալատի մասին» 2018 թվականի հունվարի 16-ի ՀՕ-58-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «սեփականության օգտագործում» բառերից հետո լրացնել «,ինչպես նաեւ պետական գործառույթների իրականացման համար միջոցների հավաքագրում» կետադրական նշանով եւ բառերով:~~

***Հոդված ~~2~~ 1.*** Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել ~~հետևյալ բովանդակությամբ~~ նոր խմբագրությամբ՝

«1.Հաշվեքննիչ պալատի անդամ, ներառյալ՝ պալատի նախագահ, կարող է ընտրվել Ազգային ժողովի պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող, բարձրագույն կրթություն ունեցող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աուդիտորի որակավորում ունեցող այն~~ անձը~~ քաղաքացին, ով ունի աուդիտորի նվազագույնը հինգ տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ~~աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ունեցող~~ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող իրավաբանական անձի ղեկավար պաշտոնի աշխատանքային ստաժ կամ հաշվեքննիչ պալատում ղեկավար պաշտոններում նվազագույնը հինգ տարվա աշխատանքային ստաժ կամ ֆինանսական ոլորտում նվազագույնը տասը տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն հինգ տարին՝ ղեկավարի պաշտոնում:»

***Հոդված ~~3~~ 2.*** ~~Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:~~ Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2.Հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնավարման ժամկետը լրանալուց երեք ամիս առաջ հաշվեքննիչ պալատի նախագահն այդ մասին տեղեկացնում է Ազգային ժողովին: Հաշվեքննիչ պալատի անդամի վաղաժամկետ թափուր տեղ առաջանալու դեպքում հաշվեքննիչ պալատի նախագահն այդ մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Ազգային ժողովին:»:

***Հոդված ~~4~~ 3.*** Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել ~~հետևյալ բովանդակությամբ~~ նոր խմբագրությամբ՝ «Հաշվեքննության առաջադրանքում նշված օբյեկտում զննման և դիտարկման ընթացակարգի իրականացման ժամկետը սահմանվում է մինչև 24 աշխատանքային օր, որը հաշվեքննության ընթացքում կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան 24 աշխատանքային օրով՝ հաշվեքննիչ պալատի որոշմամբ:»:

***Հոդված ~~5~~ 4.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը ~~օրվան~~ հաջորդող օրվանից: